Յորդանանահայ համայնքի ուղերձը ուղղուած Երուսաղէմահայերուն, Յորդանան գետի ափին, 31 Յունուար 2016-ին (*)

Ամենապատիւ Պատրիարք Սրբ. Հայր,
Բարձրաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր,
Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց համայն միաբանութեան բարեջան անդամներ,
Երուսաղէմի Հայ Համայնքի անդամներ,

Ամմանահայ համայնքի Հոգեւոր Առաջնորդ, Պատրիարքական Փոխանորդ Բարձրաշնորհ Տ. Վահան Արք. Թօփալեան, Հոգեւոր Հովիւ Տ. Հայկազուն Վրդ. Եղիայեան, ինչպէս նաեւ Յորդանանահայ գաղութի անդամները տօնական բարձր տրամադրութեամբ և խոր հաւատքի զօրութեամբ փութացած են դիմաւորելու Ձեզ, Քրիստոսի մկրտութեան այս սրբազան վայրը:

Ամեն. Պատրիարք Սրբ. Հայր, հաւատացէք որ կը բազմապատկուին մեր հրճուանքն ու բաւարարութիւնը, երբ կը տեսնենք Ձեզ և Ձեր Միաբանութիւնն ու շքախումբը այսպիսի փառահեղ ներկայութեամբ և լուսաշող դէմքերով:

Սիրելիներ, մենք մեծ ուրախութեամբ կը տեղեկանանք, որ Երուսաղէմի մեր Սրբոց Յակոբեանց Վանքի սրբավայրերը և յարակից շինութիւնները վերանորոգուած են շնորհիւ Ամենապատիւ Պատրիարք Սրբ. Հօր հետեւողական ճիգերուն և ներդրումներուն: Բոլորս քաջ կը գիտակցինք, որ մեր սրբավայրերը կը հանդիսանան մեր հաւատքի, մշակոյթի և ազգի ժառանգութիւնները: 2014 Հոկտ. 31-ին, մեր հոգեւոր հարստութեան աւելցաւ այս վայրէն մի քանի հարիւր մեթր հեռաւորութեան վրայ գտնուող Սուրբ Կարապետ եկեղեցին, որ ներկայիս կը հանդիսանայ Յորդանանի Մաղթաս շրջանի եկեղեցիներով կազմուած բաց թանգարանին հոգի տուող կառոյց մը:

Մաղթասի Արքայական Տնօրէն Մեծարգոյ Էմիր Ղէզին յայտարարած է, որ բոլոր եկեղեցիներու մէջ ամենէն շատ տպաւորած է Ս. Կարապետ Եկեղեցիի ճարտարապետական ինքնորոյն ոճը: Սիրելիներ, մենք շատ բաւարարուած պիտի ըլլայինք, եթէ քիչ մը առաջ միասնաբար վայելէինք Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ Պատարագը:

Ներկայիս, գետի այս ափին, մեր մէջ կը գտնուին Հայաստանէն եկած մօտ 30 ուսանողներ, որոնք պիտի մասնագիտանան Արաբերէն լեզուի մէջ: Ուսանողները կը գտնուին այստեղ Յորդանանի և Հայաստանի միջեւ եղած փոխադարձ համաձայնութեամբ: Ուսանողները վերադառնալով Հայրենիք պիտի ծառայեն Հայրենի պետութեան:

Այսօր, 31 Յունուար 2016-ը, որպէս նոր էջ մը, կու գայ բացուելու մեր յիշարժան օրերու մատեանին մէջ, շնորհիւ Ամենապատիւ Պատրիարք Հօր Նախագահութեամբ կատարուող այս հոգեպարար արարողութեան:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Հաշիմական Ընտանիքի Վեհապետ, Խաղաղութեան Առաջնորդ Ապտալլահ Բ. Պին Հուսէյն Թագաւորին, որ մեծ սէր ու համակրանք կը տածէ մեր Հայ համայնքներու հանդէպ: Մեզի համար մեծ ուրախութիւն է նաեւ իմանալ թէ Մաղթասի այս շրջանի Ընդհանուր Տնօրէն, հայազգի տիպար ներկայացուցիչ, ճարտարապետ Տիար Ռոստոմ Միսճեան արժանացած է Յորդանանի Մեծաշուք Թագաւոր Ապտալլահ Բ. Պին Հուսէյնի կողմէ Յորդանանի Անկախութեան շքանշա-

digitised by A.R.A.R.@

նին: Կը շնորհաւորենք զինքը:

Սիրելի Երուսաղէմահայեր, կը մաղթենք Ձեզի բարի Ամանոր և յարատեւ յաջողութիւններ 2016 տարուայ սեմին:

(*) Ներկայացուած Տիար Ներսէս Ներսէսեանի կողմէ:



Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի Սուրբսն

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլիա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա, եւ ոմանք երկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ: Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք նոցա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէք նոցա զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ: Եւ աւասիկ որ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի:

digitised by A.R.A.R.@